Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում»

Կատարող՝ Ձրվեժ համայնքի Ձրվեժ գյուղի մանակապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ- ի դաստիարակ՝ Սաթենիկ Մկրտչյան

Ղեկավար՝ Ալլա Դալլաքյան

ԵՐԵՎԱՆ- 2023

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1. «Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում»

1.1 Ինտեգրված պարապմունքների նպատակը, խնդիրները

1.2 Ինտեգրված պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

Գլուխ 2. Փորձարարական աշխատանք

Եզրակացություն

Գրականության ցանկ

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր տեխնոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Ժամանակի պահանջները նախադպրոցական հաստատության աշխատակիցներին պարտավորեցնում են փնտրել ուսուցման և տեղեկատվության ներկայացման նոր մեթոդներ: Դա պայմանավորված է յուրաքանչյուր երեխայի նկատմամբ անհատական մոտեցման անհրաժեշտությամբ, որը թույլ է տալիս բացահայտել նրա հետաքրքրությունները, կարողությունները, ստեղծագործական հակումները: Այս պահանջի իրականացման ուղիներից մեկը նախադպրոցական կազմակերպություններում ինտեգրված պարապմունքների ներդրումն է: Ուստի թեման համարվում է արդիական և հետազոտության համար արդի:

Երեխայի զարգացումն ընթանում է երեք հիմնական ուղղություններով՝ Ֆիզիկական, հոգեկան, սոցիալական, որոնք փոխպայմանավորված են և միտված ընդհանրական, միասնական արդյունքի: Զարգացման ուղղությունները պայմանականորեն տրոհվում են զարգացման ոլորտների՝ մանկավարժական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով: Ըստ զարգացման ոլորտների մշակվում են նաև կրթական ծրագրերը:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1. Շարժողական ոլորտ,
2. Խոսքի և հաղորդակցական ոլորտ,
3. Հուզական, սոցիալ-անձնային ոլորտ,
4. Իմացական ոլորտ,
5. Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ:

Նախադպրոցական կրթության համակարգում կիրառվող մեթոդիկաներն, ուղղված լինելով զարգացման ոլորտներում ներառված առանձին կողմերի զարգացմանը, կոչված են ծառայելու նախադպրոցականի զարգացման հավաքական արդյունքի արձանագրմանը, հետևաբար դրանք անհրաժեշտ է կիրառել համալրման. համակցման սկզբունքով:

Կարողունակահեն կրթության պայմաններում առանձնահատուկ կարևորվում են ինտեգրված պարապմունքները: Ինտեգրված պարապմունքներն միավորվում են ընդհանուր նպատակով՝ ուղղված են ուսուցանվող նյութի, ուսումնասիրվող թեմայի, առարկայի կամ երևույթի ամբողջական էության բացահայտմանը հարակից հասկացությունների, տարբեր կրթական ոլորտների, մանկական գործունեության ձևերի մեկտեղման և համակցման եղանակով:

Ինտեգրված պարապմունքների պարագայում քննարկվող թեմայի ամբողջական էությունը բացահայտելու, այն տարբեր կողմերից մանրամասն ուսումնասիրելու նպատակով երեխային ներկայացվում են միմյանց լրացնող, տարբեր ոլորտներից համախմբված գիտելիքներ և նոր հասկացություններ, որոնք ենթադրում են մանկական գործունեության ձևերի միաձուլում: Գործունեության տարբեր ձևերի կառուցվածքային տարրերն այնքան շաղկապված են գործում, որ հաճախ անհնար է լինում տարանջատել գործունեության մեկ ձևը մյուսից:

Հետազոտության նպատակը՝ ուսումնասիրել ինտեգրված պարապմունքների կազմակերպման առանձնահատկություններն՝ ուղղված կարողությունների ձևավորմանը:

Հետազոտության խնդիրները՝

- Ներկայացնել ինտեգրված պարապմունքների նպատակը, խնդիրները;
- Վերլուծել ինտեգրված պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում;

Հետազոտության մեթոդներ՝

- Գիտական աղբյուրների վերլուծության մեթոդներ
- Դիտում,խոսքի հայտորոշման մեթոդներ
- Դիտարկում

Օգտակարությունը՝ Հետազոտական աշխատանքի արդյունքները կօգնեն բացահայտել ինտեգրված պարապմունքի արդյունավետությունը:

Համապատասխանությունը նոր չափորոշչի /ծրագրային պահանջներին:

Ելնելով նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչից, ուսումնական հաստատության կողմից իրականացվող կրթական ծրագիրը պարտադիր է, անկախ նրա կազմակերպման ձևից: Ապահովել նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի անվտանգ միջավայրի և աղետների պատրաստվածության չափանիշները:

Աշխատանքի կառուցվածքը՝ աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, հետազոտական աշխատանքից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

1.1 Ինտեգրված պարապմունքների նպատակը, խնդիրները

Նախադպրոցականների համար ինտեգրված պարապմունքների նպատակները ներառում են

- շրջապատող աշխարհի ամբողջական ընկալման ձևավորում.
- նոր տեղեկատվության ինքնուրույն զարգացման և կիրառման հմտությունների զարգացում.
- երեխային ծանոթացնել արվեստին, զարգացնել գեղագիտական ճաշակը.
- ստեղծագործական կարողությունների զարգացում.

Մանկավարժի առջև դրված է բարդ խնդիր, չշեղվելով պարապմունքների հիմնական թեմայից, պահպանել հետաքրքրությունը, նաև ապահովել գործունեություն, որը համապատասխանում է տարիքային զարգացման չափորոշիչների: Այս պահանջը ենթադրում է հենվել երեխաների ուժեղ կողմերի վրա և փորձել նրանց մեջ զարգացնել բոլոր ոլորտները՝շարժողական, խոսքի և հաղորդակցական, հուզական, սոցիալ-անձնային, իմացական, ինքնասպասարկման:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են ստեղծում՝

- մեկ պարապմունքի միջոցով երեխային տրամադրել այն գիտելիքներն ու կարողունակությունները, որոնք տրվում են առանձին պարապմունքների ընթացքում,
- հետաքրքիր հնարների միջոցով երեխայի ուշադրությունը և հետաքրքրությունն ուղղորդել դեպի թեման,
- ինտեգրված պարապմունքի թեման վերաբերում է կյանքին, և դրա շնորհիվ երեխան առարկայական գիտելիքների ու կարողունակությունների հետ մեկտեղ ձեռք է բերում նաև գործնական հմտություններ և գիտելիքներ,
- պարապմունքը չի կենտրոնացված միայն մեկ առանձնացված ոլորտի վրա, հետևաբար մեկ պարապմունքի ընթացքում երեխան ստանում է բազմակողմանի գիտելիքներ:

Պարապմունքի թեման ընտրելիս դաստիարակը պետք է հաշվի առնի դրա կարևորությունն ու հագեցվածությունը՝ բովանդակային առումով, ինչպես նաև, երեխաների տարիքային առանձնահատկություններից ելնելով, համապատասխանությունը կրթական ծրագրին:

Ինտեգրված պարապմունքն իրենից ներկայացնում է պարապմունքի առավել ակտիվ ձև, որի ընթացքում երեխան ձեռք է բերում՝

- թիմում աշխատելու կարողունակություն,
- սեփական կարծիքն արտահայտելու, դիմացինինլսելու կարողունակություն,
- ինքնուրույնություն,
- բարդ իրավիճակներում կողմնորոշվելու հմտություն,
- խոսքը ճիշտ ձևակերպելու հատկություն,
- վերլուծողական, դատողական կարողունակություններ,
- համաձայնեցված գործողություններ՝ խաղալ, խոսել, քննարկել, կատարելու հմտություն:

Ինտեգրված պարապմունքի ժամանակ մեկ թեմայի շուրջ տարվող քննարկումները, զրույցները, խաղերն ու վարժությունները երեխային օգնում են լինել ակտիվ, ուշադիր: Այսպիսով՝ ինտեգրված պարապմունքները դաստիարակին

հնարավորություն են տալիս երեխայի մեջ դաստիարակել որակներ, որոնք անհրաժեշտ են ողջ կյանքում:

Փորձը ցույց է տալիս, որ ինտեգրված պարապմունքները հաճելի են, զվարճալի և արդյունավետ, հատկապես եթե դրանք անցկացվում են կերպարվեստային միջոցների և երաժշտության զուգակցմամբ:

Ինտեգրված պարապմունքների արդյունավետության ցուցանիշներից մեկն այն է, որ բոլոր երեխաներն այդ ժամանակ դառնում են գործուն և յուրաքանչյուրը զբաղվում է իր համար նախընտրելի աշխատանքով: Այստեղ կարևոր է, որ ուսումնական գործընթացին մասնակցում են բոլոր երեխաները: Այսպիսի գործունեության ընթացքում ակտիվորեն զարգացնում են երեխայի հոգեկան գործընթացները, նրանք սովորում են համագործակցել ընկերների հետ:

Բարձրանում է երեխայի ինքնագնահատականը, հնարավորություն է ստեղծվում ճանաչողական գործընթացը դարձնել հագեցված: Դա օգնում է երեխաներին բացահայտելու իրենց ուժեղ կողմերը, ստեղծագործական ունակությունները:

Ուսուցման ընթացքում դաստիարակը պետք է հաշվի առնի երեխաների անհատական տվյալները, այսինքն՝ յուրաքանչյուր երեխա հնարավորություն է ստանում նյութը յուրացնել ըստ իր խառնվածքի, զարգացման և ընկալման կարողունակությունների:

Երեխաների նկատմամբ անհատական մոտեցումը բացառում է ուժեղների և թույլերի միջև հակասությունների առաջացման ու խորացմանը:

Ավելի բարդ առաջադրանքները հանձնարարվում են ուժեղներին, այդ դեպքում նրանց զարգացումը չի աւգելակվում, և միևնույն ժամանակ միջին և թույլ հնարավորություններովերեխաներիհամար ուժերը փորձելու, ինքնուրույն քայլեր անելու պայմաններ են ստեղծվում: Այսինքն յուրաքանչյուր երեխա ստանում է անհատական զարգացման հնարավորություն:

Ինտեգրված պարապմունքները նպաստում են երեխաների աշխարհի ամպողջական պատկերի ձևավորմանը:

1.2 Ինտեգրված պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները

Ինտեգրված պարապմունքներն ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված պարապմուքնները կարևորում են գործունեության այն ձևերը որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:
Ինտեգրված ուսուցումը ենթադրում է տարբեր մեթոդիկաների միջև կապերի ստեղծում, այսինքն, որևէ թեմա ուսումնասիրելիս ամփոփվում են տարբեր մեթոդիկաներից հարցեր և երեխաները հասկանում են տարբեր մեթոդիկաների միջև գոյություն ունեցող կապերը: Երեխաներին առաջարկվում են հետաքրքիր թեմաներ կենսական հարցերի շուրջ: Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով՝ ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ:

Դաստիարակը ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս հաշվի է առնում հետևյալը.

- թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին,
- ընտրված թեման նպաստում է երևակայության և ստեղծագործական մտածողության խթանմանը,
- ընտրված թեման անհրաժեշտ է անցնել այնպես, որ ապահովվի բոլոր երեխաների մասնակցությունը,
- երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու և որոշակի պատասխասխանատվություն կրելու,
- երեխաները կարողանան ավելացնել իրենց գիտելիքներն ու փորձը՝ միջավայրի, առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, ինչպես նաև ճանաչողական գործունեության ակտիվացման նպատակով, ինտեգրված պարապմունքների ընթացքում կիրառվում են տարբեր մեթոդներ, դաստիարակը օգտվում է նաև տարբեր միջոցներից:

Ուսուցման կազմակերպման ավանդական ձևերը պարբերաբար մշակվում և կատարելագործվում են: Փորձը ցույց է տալիս, որ փոխներգործուն մեթոդների կիրառումը նախադպրոցական տարիքի երեխաների համար պարապմունքները դարձնում է հաճելի, զվարճալի և արդյունավետ՝ հատկապես, եթե դրանք անցկացվում են կերպարվեստային միջոցների ու երաժշտության զուգակցությամբ: Այստեղ կարևոր է նաև այն, որ ուսուցման գործընթացին մասնակցում են տվյալ տարիքային խմբի բոլոր երեխաները: Նման գործունեության ընթացքում ակտիվորեն զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները: Նրանք սովորում են համագործակցել հասակակիցների հետ, բարձրանում է երեխայի ինքնագնահատականը, հնարավորություն է ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իսկապես հագեցված: Դա օգնում երեխաներին՝ բացահայտելու իրենց ուժեղ կողմերը, ստեղծագործական ունակությունները, բավարարելու հետքրքրությունները:

Նման պարապմունքները կարող են անցկացվել ինչպես ենթախմբերով, այնպես էլ ամբողջ խմբի հետ՝ ըստ պարապմունքի նպատակի, տեսակի և ուսումնական նյութի: Կարևորվում են պարապմունքների տեղի և ժամանակի ընտրությունը, դրանց անցկացման ձևերը, ուսումնական զարգացնող միջավայրը: Դրանք օգնում են երեխաներին՝ այս կամ այն գործունեության ընթացքում առավելագույնս տրամադրվելու դաստիարակի կողմից առաջադրվող նյութի ընկալմանը: Եթե պարապմունքը պահանջում է նախատեսված գիտելիքների հաղորդում կամ երեխաների յուրացրածի համակարգում, և դաստիարակը դեռևս լավ չի տիրապետում նոր մեթոդների, ապա այն կարող է անցկացվել ավանդական ձևով: Աստիճանաբար հմտանալով՝ դաստիարակը կարող է առավել ակտիվ օգտագործել դրանք, որպես ուսումանդաստիարակչական աշխատանքի արդյունավետ ձև:

Ուսուցման ընթացքում դաստիարակը հաշվի է առնում երեխաների անահատական տվյալները. Այսինքն՝ յուրաքանչյուր երեխա հնարավորություն է ստանում ուսուցվող նյութը յուրացնել ըստ իր հոգեկան զարգացման, խանվածքի և ընկալման կարողությունների : Երեխաների նկատմամբ անհատական մոտեցումը բացառում է ուժեղների և թույլերի միջև հակասությունների առաջացումը և խորացումը:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս կիրառելու ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, աշխատելով փոքր խմբերով, համագործակցելով

հասակակիցների հետ, յուրաքանչյուր երեխա օգտվում է բավականին շահեկան և բարենպաստ պայմաններում: Այսպես՝

- Համագործակցելով հասակակիցների հետ, նա ավելի արագ է ինտեգրվում;
- Նույն ժամանակահատվածում խմբի բոլոր երեխաները զբաղված են;
- Համագործակցության ընթացքում բարձրանում է երեխայի ինքնագնահատականը;
- Երեխան հնարավորություն է ունենում ազատ ինքնաարտահայտվելու;
- Երեխաները հնարավորություն են ստանում սովորել սեփական սխալների վրա,
- Ուսուցումը վեր է ածվում հաճելի համագործակցության և այլն…….

Պարապմունքի ընթացքում կազմակերպվում է անհատական, խմբային, զույգերով աշխատանք, կիրառվում են հետազոտական, դերային խաղեր, ստեղծագործական գործունեություն և այլն:

Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- Նոր մեթոդների կիրառում,
- Փոխազդեցություն, փոխուսուցում,
- Երեխայի ակտիվություն,
- Համագործակցություն,
- Ինքնաարտահայտման խրախուսում,
- Հետադարձ կապ և այլն:

Պարապմունքի ձևի ընտրությունը, ըստ մեթոդների, որոշում է դաստիարակը՝ ծրագրով նախատեսված թեմային համապատասխան: Եթե տվյալ թեման կարելի է մատուցել խաղի, խաղ- պարապմունքների, էքսկուրսիաների կամ ինտեգրված պարապմուննքերի ձևով, ապա դաստաիարկն այդ ընտրությունը ամրագրում է պլանավորման մեջ: Այն չի կարող ինքնանպատակ լինել կամ կամյական բնույթ կրել այլ պայանավորված է՝

- Ուսուցման նպատակներով և խնդիրներով,
- Ուսուցանվող նյութի բովանդակությամբ, ծավալով և բարդությամբ,
- Երխաների պատրաստվածության մակարդակով,
- Տարիքային առանձնահատկություններով,
- Երեխաների թվաքանակով,
- Դաստիարակի պատրաստվածության մակարդակով:

Ինտեգրված պարապմունքները կարող են ծառայել նաև որպես ամփոփիչ պարապմունք, որի ընթացքում դաստիարակը կկիրառի նոր մեթոդներ: Ավելի հաճախ դրանք անհրաժեշտ է օգտագործել, որպես ամենօրյա պարապմունքներ, որոնք ամենևին կարիք չունեն նախապես երեխաներին նախապատրաստելու: Նման պարապմունքները արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ է միայն պլանավորել պարապմունքի ամբողջ ընթացքը, հստակ ձևակերպել նպատակները, նախապատրաստել անհրաժեշտ նյութերը ըստ ենթախմբերի: Այսպիսի պարապմունքների ընթացքում երեխաներն աստիճանաբար սովորում են ինքնուրույն աշխատել և այդ կերպ ձևավորվում են հետազոտական հմտություններ և կարողություններ: Նրանք սովորում են համարձակ արտահայտել իրենց կարծիքները այս կամ այն հարցի շուրջ: Կարողանում են ամփոփել իրենց սովորածը և իմացածը՝ ընտրած թեմայի շրջանակում: Կատարում են համեմատություններ և գտնում տարբերությունները, ազատ և անկաշկանդ երևակայությամբ ստեղծագործում են և ներկայացնում իրենց կատարած աշխատանքները: Սովորում են կարծիք հայտնել ընկերոջ կատարած աշխատանքի վերաբերյալ:

Գլուխ 2. Փորձարարական աշխատանք

Պարապմունք՝ Ծանոթացում շրջապատին

Թեմա՝ «Կրակը՝ մեզ բարեկամ, կրակը՝ թշնամի»

Նպատակը՝

- Ամրապնդել և ընդլայնել կրակի մասին երեխաների գիտելիքները:
- Ամրապնդել պատկերացումները անվտանգ վարքագծի կանոնների վերաբերյալ:

Խնդիրները՝

Անվտանգություն

- Անհրաժեշտ է ամրապնդել երեխաների գիտելիքների այն մասին, որ անհրաժեշտության դեպքում մեծահասակները և նաև իրենք կարող են զանգահարել <<101>> և <<103>> հեռախոսահամարներով:
- Ամրապնդել կենցաղային առարկաների հետ անվտանգ շփման կանոնները:
- Ձևավորել անվտանգության կանոններին հետևելու և վտանգը հաղթահարելու սեփական հնարավորությունները գնահատելու հմտություն:

Հաղորդակցում

- Հետաքրքիր փաստերը և իրադարձությունները հասակակիցների, մեծահասակներին բովանդակալից հուզականորեն պատմելու կարողության ձևավորում:
- Ինքնուրույն դատողություններ կատարելու կարողության ձևավորում:

Ֆիզկուլտուրա

- Ֆիզկուլտուրայի և սպորտի նկատմամբ հետաքրքրության դրսևորում,
- Ֆիզիկական որոկների՝ ուժի, արագության, ճարպկության, ճկունության զարգացում:

Երաժշտության

- Երեխաների երաժշտական տպավորությանների հարստացում:

Մեթոդներ և հնարքներ

- Նկարների դիտում, զրույցներ, հարցեր և հարցադրումներ, խաղ-վարժություններ:

Անհրաժեշտ պարագաներ՝

Պատրաստել հրդեհային իրավիճակներին առնչվող նկարներ, յուրաքանչյուր երեխային տրամադրել 0-3 թվաքարտեր, խաղալիք-հեռախոս, մարմնամարզական նստարաններ, մասերի բաժանված նկարներ:

Ընթացքը՝

Ողջունել հյուրերին.

Երեխաներին զբաղեցնեն իրենց տեղերը, հիշեցնել աթոռակներին ճիշտ նստելու մասին, հետևել կեցվածքին:

Պարապմունքը սկսել հանելուկով: Հանելուկը գուշակելով, կիմանան ինչի մասին ենք խոսելու պարապմունքի ընթացքում:

Ինձ օգնում են, հովն ու քամին,
Ջուրն է միայն, իմ թշնամին:

(կրակ)

Դաստիարակ - Երեխաներ, մարդիկ կրակը օգտագործել են դեռ հնագույն ժամանակներից, այն ստացել են փայտի երկու չոր կտորներ միմյանց շփելով: Կրակը մարդու հավատարիմ ընկերն ու բարեկամն է, առանց կրակի մեր կյանքն անհնար է պատկերացնել: Կրակը լույս է, ջերմություն, որը մեզ տաքացնում է, կրակի օգնությամբ մենք ճաշ ենք եփում, հաց թխում, որպեսզի այն մեզ ուրախություն և օգուտ բերի, մենք պետք է ճիշտ վարվենք կրակի հետ: Բայց կրակը միշտ չէ, որ լինում է բարի, այն կարող է նաև լինել չար և վտանգավոր, եթե մենք նրա հետ զգույշ չվարվենք: Երեխաներ, իսկ ե՞րբ է կրակը դառնում վտանգավոր, չար:
(Լսել երեխաների պատասխանները)

- Երբ որ չենք պահպանում անվտանգության կանոնները:
- Երբ, որ խաղում ենք ենք կրակի հետ:

Իսկ հիմա, եկեք դիտենք մի փոքրիկ պատմություն երկու քույրիկների մասին, ովքեր չգիտեին, թե ինչ վտանգավոր է կրակը և ինչ վատ հետևանքներ կարող են տեղի ունենալ:

Բեմականացում-Փոքրիկ քույրիկները տանը մենակ լինելով որոշում են ճաշ պատրաստել տիկնիկների համար, ինչի հետևանքով հրդեհ է բռնկվում:

- Երկու քույրիկ միասին,
  Տանը մենակ մնացին,
  Որոշեցին ճաշ եփել,
  Տիկնիկներին զարմացնել:

- Գազօջախը վառեցինք,
  Կաթսան վրան դրեցինք,

Բայց չիմացանք ինչ եղավ,
Մի բոց հանկարծ դուրս թռավ:

- Վա~յ վա~յ այս ինչ կատարվեց,
  Ինչու հրդեհ բռնկվեց:

Պար - << Կրակ >>

Բեմականացումը դիտելուց հետո հարցեր ուղղել երեխաներին:

Դաստիարակ – Երեխանե'ր, իսկ ինչ պետք է անել առաջին հերթին, երբ տանը հրդեհ է առաջացել: (Լսել երեխաների պատասխանները)

- Պետք է զանգենք հրշեջ ծառայություն:

Դաստիարակ – Իսկ որ համարով ենք զանգահարում հրշեջ ծառայություն:

- << 101 >>
- «101» թվերը փակցնել գրատախտակին:

Առաջարկել երեխաներին սեղաններին դրված թվաքարտերով, կազմել հերշեջ ծառայության հեռախոսահամարը:

Խոսել նաև նրա մասին, որ քիչ է իմանալ հրշեջ ծառայության հեռախոսահամարը, երեխաները պետք է իմանան իրենց տան հասցեն, որպեսզի հրշեջները կարողանան գալ օգնության:

Երեխաներին խնդրել խաղալիք-հեռախոսով հավաքել 101 հեռախոսահամարը, ներկայացնել տանը հրդեհ առաջանալու մասին և նշել տան հասցեն:

Հրավիրել հրշեջների, որոնք կներկայացնեն իրենց աշխատանքը:

Հրշեջ – Բարև Ձեզ սիրելի երեխաներ տեսնում եք, թե ինչ կարող է պատահել, եթե կրակի հետ զգույշ չլինենք: Եկեք, հիմա խոսենք, թե ինչ չի կարելի անել հրդեհի ժամանակ: (Լսել երեխաների պատասխանները)

- Չի կարելի թաքնվել պահարանների մեջ և մահճակալների տակ:
- Չի կարելի բացել պատուհանները:

Հրշեջ - Իսկ ինչու՞չի կարելի բացել պատուհանները:

- Որովհետև կրակը թթվածնի ներխուժումից ավելի է թեժանում:
- Չպետք է խուճապի մատնվել, այլ պետք է արագ դուրս գալ տանից:
- Պետք է թաց լաթով փակել քիթն ու բերանը և սողալով դուրս գալ տանից:
- Հրդեհի ժամանակ չպետք է օգտվենք վերելակներից:

Հրշեջ– Դուք շատ ճիշտ եք երեխաներ, իսկ հիմա եկեք նշենք, թէ ինչ չպետք է անենք որ խուսափենք հրդեհից: (Լսել երեխաների պատասխանները)

- Չի կարելի խաղալ կրակի հետ:
- Վտանգավոր է խաղալ լուցկու, կրակմարիչի, վառվող մոմի հետ:
- Չի կարելի խաղալ վարդակների հետ:
- Երեխաներին չիկարելիմիացնելգազօջախը, արդուկը:
  - Մինչ տանից դուրս գալը պետք է անջատենք լույսը և բոլոր էլեկտրական սարքերը:

Հրշեջ – Այո, երեխաներ դուք շատ ճիշտ եք պետք է իմանալ և պահպանել անվտանգության կանոնները, տանը պետք է անպայման ունենալ կրակմարիչ և առանց մեծահասակի չպետք է միացնել էլեկտրական սարքերն ու խաղալ կրակի հետ:

Դաստիարակ – Երեխաներ իսկ հրդեհի ժամանակ ում օգնությանը պետք է դիմենք տուժածներին օգնելու համար: (Լսել երեխաների պատասխանները)

- Պետք է զանգենք շտապ օգնություն:

Դաստիարակ – Իսկ որ համարով ենք զանգահարում շտապ օգնություն:

- 103
- 103 թվերը փակցնել գրատախտակին:

Առաջարկել երեխաներին սեղաններին դրված թվաքարտերով, կազմել հերշեջ ծառայության հեռախոսահամարը:

Երեխաներին խնդրել խաղալիք - հեռախոսով հավաքել 103 հեռախոսահամարը և կանչ գրանցել:

Հրավիրել բժիշկներին, ովքեր կկատարեն իրենց աշխատանքը:

- Երազել եմ մանկուց միշտ,
  Դառնալ հմուտ, լավ բժիշկ,

  Հենց կարիքը իմ լինի,

  Գնամ հիվանդին այցի:

- Թե փորձանք է պատահում,

Օգնության ենք մենք հասնում,

Ծանր ու դժվար պահերին,

Մեծ հավատով ու հույսով,

Մեզ ձեր կյանքն եք վստահում:

- Ճերմակ մաքուր խալաթով,
  Քնեմ նրանց ես հերթով,
  Նշանակեմ դեղ ու հաբ,
  Որ դուք ձեզ շատ լավ զգաք:

Դաստիարակ – Երեխաներ մենք գիտենք նաև բանաստեղծություններ անվտանգության մասին:

- Բնության գրկում շատ է պատահում,
  Կրակ են վառում ու խարույկ անում,
  Վերջում էլ անփույթ թողնում հեռանում,
  Վառվող կրակին չեն էլ հանգցնում:

- Թե մեծ, թե փոքր պետք է միշտ հիշենք,
  Բնության հանդեպ ուշադիր լինենք,
  Կրակի ուժը պիտի հասկանանք,
  Ծառին ու խոտին, որ վնաս չտանք:

Խաղ - «Փրկարարներ»:

Տղաները բաժանվում են երկու խմբի և մարմնամարզական նստարանների վրայով, սողալով հասնում են օգնության և հրդեհված տանից հանում են աղջիկներին:

Հաջորդիվ անցկացնել ուշադրությունը զարգացնող և ակտիվացնող խաղ **<<Ամբողջացրու նկարը>>**

Երեխաներին հրավիրել սեղանների մոտ և առաջարկել ճիշտ հաջորդականությամբ դասավորել ծրարների մեջ գտնվող նկարների (հրշեջի և բժշկի) մասերը:

Ամփոփել պարապմունքը:

1. Երեխաներ Ձեր կարծիքով քույրիկները ճիշտ վարվեցին:
2. Ձեր կարծիքով կարևոր է արդյոք հրշեջի և բժշկի մասնագիտությունը:
3. Ինչ սովորեցինք կրակի, հրդեհի վտանգի մասին:
4. Ինչպես խուսափել վտանգավոր իրավիճակից:
5. Ում պետք է դիմենք հրդեհի ժամանակ և որ համարով պետք է զանգենք:

Պարապմունքի ընթացքում երեխաները ծանոթացան անվտանգության կանոնների պահպանման հետ, դիտեցին բեմականացում, որից հետո քննարկեցին, իրենց սեփական կարծիքը, մտքերը արտահայտեցին հերոսուհիների մասին, ծանոթացան հրշեջի, բժշկի մասնագիտության հետ, հյուրընկայեցին հրշեջների, որոնք խոսեցին կրակի, հրդեհի վտանգի մասին և ինչպես խուսափել վտանգավոր իրավիճակից: Նշեցին նաև, որ պետք չէ խուճապի մատնվել, այլ արագ կողմնորոշվել և դիմել մեծերի օգնության:

«Փրկարարներ» խաղի ընթացքում տղաները մեծ ոգևորությամբ փրկեցին խմբի աղջիկներին հրդեհված տնակից, փրկեցին նաև ընտանի կենդանիներին, ինչի շնորհիվ էլ դարձան հոգատար իրենց ընկերների և կենդանիների հանդեպ, ընկերացան, մտերմացան իրար հետ:

Պարապմունքի վերլուծության ժամանակ շատ ծնողներ նշեցին, որ իրենք էլ տեղեկացված չէին, թե ինչպես պետք է վարվեն հրդեհի ժամանակ (որ ծխի ժամանակ պետք է խոնավ շորով փակել քիթն ու բերանը, պառկել հատակին, որովհետև ծուխը բարձրանում է վերև, իսկ կրակի ժամանակ չի կարելի բացել պատուհանները, որովհետև դա նպաստում է կրակի թեժացմանը):

Եզրակացություն

Ուսումնասիրելով ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում թեման, հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

- Յուրաքանչյուր երեխա ունի որակյալ կրթություն ստանալու իրավունք,
- Դաստիարակի առաքելությունն է դաստիարակել համակողմանի և ներդաշնակ զարգացած անձ,
- Ներկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ակտիվ ուսուցման մեթոդները՝ ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդները,
- Ինտերակտիվը բացառում է որևէ մեկի առաջնայնությունը, գերակայությունը, մի տեսակի գերակշռությունը մյուսների նկատմամբ,
- Ինտեգրված պարապմունքների արդյունավետությունն այն է, որ բոլոր երեխաները դառնում են գործուն, յուրաքանչյուրը զբաղվում է իր առանձնահատկություններին համապատասխան, իր համար ցանկալի աշխատանքով: Այստեղ տարբերվում է մի երեխայի գերակայությունը մյուսների նկատմամբ:

Գրականության ցանկ

1. «Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ»:
2. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար»:
3. Ս. Մարության, Ա. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն»
4. https://multiurok.ru/files/gortsnakan-met-od.html
5. http://1course.ysu.am